ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2021 թվականի սեպտեմբերի 8-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 2՝՝ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Տ. Բագրատյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրություն:
2. 2022-2023թթ ուստարվա խնդիրներն ու անելիքները:
3. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրության հարցը:

Դասղեկ Տ. Բագրատյանը նախ շնորհավորեց բոլոր ծնողներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ և ասաց, որ հուսով է համագործակցությունը կընթանա փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտում: Ընկեր Բագրատյանը նշեց նաև, որ նոր ուսումնական տարում ձևավորելու են նոր ծնողական խորհուրդ՝նախագահ և անդամներ: Ծնողական խորհուրդն ունի իր կարևոր դերն ու նշանակությունը դպրոցում կազմակերպվող ցանկացած աշխատանքներում:

Ընտրվեց ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Հունանյան Արմինե
2.Ավետիսյան Արմինե
3.Ավագյան Նոյեմզար
4.Վարդանյան Արմինե
5.Գյուլամերյան Արմինե

Ակտիվ քվեարկության արդյունքում ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Հունանյան Արմինեն:

Որոշեցին.- Բարեխղճորեն կատարել իրենց վստահված գործը, օգնել դասղեկին:

2. Լսեցին.- 2022-2023 ուստարվա խնդիրներն ու անելիքները:

Ելույթ ունեցավ դասղեկ Տ. Բագրատյանը, ով ներկայացրեց 2022-2023 ուստարվա անելիքներն ու խնդիրները: Տ. Բագրատյանը առաջարկեց մեծ ուշադրություն դարձնել կարգապահությանն ու առաջադիմությանը՝ շտկելով նախորդ տարվա

սխալները և բացթողումները: Առավել հետևողական լինեն երեխաների առաջադիմությանը: Դասղեկ Տ. Բագրատյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների առաջադիմության հիմնախնդիրների հարցում: Դասղեկը հորդորեց ծնողներին սերտ կապ պահպանել ուսուցիչների և դպրոցի հետ, ինչը կխթանի սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը ճիշտ ու արդյունավետ կազմակերպելուն: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել անհրաժեշտ գրենական պիտույքները, լավ պահել, պահպանել դասագրքերը, մասնավորապես չկորցնել դրանք:

Որոշեցին.- Ծնողները խոստացան հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հաճախակի այցելել դպրոց, կապ հաստատել ուսուցիչների, դասղեկի, տնօրենի հետ:

3. Լսեցին.-Ընթացիկ հարցեր/դասացուցակ, ռեժիմ /:

Դասղեկը նշեց , որ նոր ուսումնական տարում դասերը սկսվելու են ժամը 9^{00}-ին, ուսուցումը հնգօրյա է: Նա հորդորեց ծնողներին հետևել, որ երեխաներն հավուր պատշաճի հաճախեն դպրոց, հետևեն սանիտարահիգենիկ վիճակին: Պահել ծնող-դասղեկ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտավայել կեցվածքով, լինեն կարգապահ, դասերին պատրաստ, բարեխղճորեն կատարեն իրենց պարտականությունները, հետևեն սանիտարահիգիենիկ վիճակին:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Արմինե Հունանյան

Քարտուղար՝ Արմինե Ավետիսյան